

# ԱՅՐԱՐԱ







## 1. ԱՆՄԱՀԱԿԱՆ ԽՆՁՈՐ

Ընում ա շինում ավալ ժամանակին մի թագավոր, ունենում ա իրեք տղաւ:

Էս թագավորը իրա պալատի աղաքին մի լավ գյուլի բաղ ա ունենում՝ մեջը Անմահական խնձորի ծառ։ Համա ի՞նչ անում ա շի անում, չի կարում էդ Անմահական խնձորի ծառի բարը ուտի։ Նրա կատեպանները էդ ծառը պահում ին, բեշարում, հենց գալիս էր հասնելու վախտը՝ տեսնում ին ծառի վրեն էլ ո՞նչ խնձոր կա, ո՞նչ զադ:

Մի տարի էլ թագավորի մենծ տղեն գալիս ա հորն ասում. — Ա՛յ հեր, էս տարի էլ թո՛ղ ես մուղաթ կենամ. բալի կարենամ էդ խնձորի դողին կալնի։

— Թո՛ւ զիտաս, ա՛յ որդի, — ասում ա հերը, — թե կարաս՝ գնա մուղաթ կա՛ց։

Հենց որ գալիս ա խնձորի հասնելու վախտերը, էս մենծ աղպերը վեր ա կենում, էթում Անմահական խնձորի ծառի տակին դշեր-ցերեկ զարավուզ քաշում, ընշանք հասնիլը, Գալիս ա խնձորը հասնում. հենց էն էր՝ առավոտը որ լիսանար, պտի բաղեր տաներ տար, հորը։ Սաղ գշերը շի քնում. գալիս ա լիսադեմին քումը տանում ա: Ընդհան մի դկ գալիս ա, շուշալվում ծառը, խնձորներն ուտում՝ էթում։

Տղեն աշքը բաց ա անում, թամաշ անում ծառին. տենում ա ծառը լափ դարտակ՝ ո՞նչ խնձոր կա, ո՞նչ զադ: Շատ գլխին, ոտին ա անում, համա էլ որդե՞ւ: Գալիս ա հորը նազ անում:

— Ա՛յ հեր,—ասում ա,—ես էսքան վախտ խնձորի ծառը պահցի, որ զադ շմուանա. հենց էկավ քաղելու վախտը՝ էդ զշեր սատանական մի սհաթ աշքս կպցրի. մին էլ վե կացա՝ տեհա ո՞նչ խընձոր կա, ո՞նչ զադ:

Էն մի տարին էլ գալիս ա միշնեկ տղեն:

— Ա՛յ հեր,—ասում ա,—թո՞ղ էս տարի էլ ես էթամ մուղաթ կենամ. մարդ ա, բալի ես կարում եմ խնձորի գողին սըպանի:

— Ա՛յ որդի, դու գիտաս,—ասում ա հերը,—գնա՛ մուղաթ կա՛ց:

Միշնեկ աղպերն ա՝ նետուանեղը վեր ա ունում, գալի էդ խընձորի ծառի տակին դարավուկ քաշում: Գալիս ա հասնելու վախտերքը, որ էն զշեր պտի մնար, առավոտը քաղեր, տաներ թագավորին՝ մի ղաֆիլ լիսադեմին քունը տանում ա: Էն դհիցը էլ եդ գնը գալիս ա շուլալվում ծառը, խնձորներն ուտում՝ էթում: Տղեն բիրդան վեր ա թոնում, ծառին մտիկ տալի՛ տենում ա լափ դարտակ. ո՞նչ խնձոր կա, ո՞նչ զադ: Փոր-փոշման գալիս ա տուն, հորը նազ անում, որ խնձորի գողին շկարաց բռնի:

Էն մի տարին էլ, կգա պուճուր տղեն:

— Ա՛յ հեր,—կասի,—էս տարի էլ թո՞ղ ես էթամ խնձորին մուղաթ կենամ:

Հերը կասի.— Ա՛յ որդի, մենծ աղպերդ, միշնեկ աղպերդ գնացին՝ ի՞նչ լաթեցին, որ դու էթաս՝ ի՞նչ լաթես:

Պուճուր տղեն որ շատ կզոսի հորը, հերը կասի.— Լա՛վ, թե որ էդքամ սրտով ուզում ես՝ գնա՛, էս տարի էլ դո՞ւ մուղաթ կաց:

Պուճուր աղպերն ա՝ նետուանեղը վե կոմի, կէթա խնձորի ծառի տակին դարավուկ կքաշի: Կկենա մի շաբաթ, էրկու շաբաթ, խընձորները կհասնեն: Կասի. «Թո՞ղ էս մի զշերն էլ մնա, լավ հասնի՝ առավոտը քաղեմ, տանեմ հորսօ: Էդ սաղ զշերն էլ որ ասես, աշքը վի կպցնի: Կգա լիսադեմին տղի քունը կզոսի: Կհանի էն սհաթը դանակը, մատը կկտրի՝ վրեն աղ կանի, որ մատը մումուա, բալի քունը շտանի:

Հենց էն ա լիսվե-լիս էր՝ տղեն կտենա էն դհիցը մի եքա դև էկավ, շուլալվեց ծառը, որ խնձորներն ուտի: Զա՞նըմսան տղեն,

նետուանեղը կրաշի, տալու բաշտան դկը ծառիցը գըրըմփալեն վե  
կընկնի: Վրա կհասնի, որ մըն էլ տա՛ դկը վե կկենա ընենց յարա-  
լու կփախնի: Տղեն էլ կընկնի եննուցը:

Դեւ կէթա, կէթա՝ գըրըմփալեն կընկնի մի խոր ֆորի մեջ:  
Տղեն կկուանա՝ կտենա որ էդ ֆորը ո՞նչ տուա ունի, ո՞նչ տակ: Ֆորը  
ըտե նշան կանի, ինքը կգա էդ բաղը, Անմահական խնձորները  
կքաղի, կտանի հորը:

Հերը խնձորները որ կտենա թե չէ՝ էն սհաթը թախտիցը վե  
կգա, տղի ճակատը կպաշի:

Տղեն կասի:— Ա'յ հեր, խոսքն էս չի, որ էս տարի խնձորները  
ըերեցի, խոսքն է՛ն ա, որ էն դկին սըպաննենք, որ ամեն տարի  
գալիս ա խնձորներն ուստում: Ես որ նրան յարալու արի, թողաց  
փախավ. եննուցն ընկա, տեհա գնա՛ց, գնա՛ց՝ ընկավ մի խոր ֆո-  
րի մեջ: Էդ ֆորն էլ նշան եմ արե. թող մեկել աղպրտինքս էլ հեննես  
գան՝ էթանք էդ դկին սպաննենք:

Թագավորը կասի:— Գնացե՛ք, ա՛յ որդիք. լա՛վ կանեք, որ կա-  
րենաք էդ դկի համախցը գաք, թե չէ գյալաշաղը էլի կգա մեր խնձոր-  
ները կտանի:

Իրեք աղպերով խոսքները մին են անում՝ վե կենում, էթում:  
էթում են, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում են էն ֆո-  
րի զրաղը: Աղաք մենծ աղպորն են կախ տալի:

Մի քիչ որ ներքև ա էթում, ձեն ա տալի:— Ա'յ հարա՛յ, ես էր-  
վե՛ցի, քաշե՛ք:

Աղպրտինքն էլ եդ քաշում են, հանում:

Եննա միշչնեկ աղպորն են կախ տալի: Սա էլ որ մի քիչ էթում ա,  
էթում, ձեն ա տալի:— Ա'յ հարա՛յ, էրվե՛ցի, խաշվե՛ցի, քաշե՛ք:

Աղպրտինքը քաշում են, հանում: Եննա պուճուր աղպերն ա կախ  
ըլնում: Ասում ա:— Որ կասեմ՝ էրվե՛ցի, խորովվե՛ցի, դուք անկազ  
չեք անի, հա՛ կախ կտաք, ընշանք հասնեմ:

Պուճուր աղպորը կախ են անում: Ինշքամ ձեն ա տալի. «Ա'յ  
հարա՛յ, էրվե՛ցի, փոթոթվե՛ցի», աղպրտինքը անկազ չեն անում.  
հա՛ կախ են տալի, ընշանք որ անտակն ա հասնում:

— Աղպրտինք, — կասի, — դե պարանը քաշե՛ք, հասա. Ես  
հմի էթամ դկի հավարին:

Տղեն մի քիչ երըմիշ էլավ, տեհավ աղաքը մի դուռը. բաց արեց,  
անսաս նի մտավ: Տեհավ մի հուրի-մալաք աղջիկ ընդե նստել ա,

քարգա ա անում. աղաքին էլ դրած ա մի Ոսկե սինի՝ միջին Ոսկե աղվես, Ոսկե թաղի, որ աղվեսի եննուցն ա բնկե, ուզում ա կալնի՛ Օխտը գլխանի դևն էլ գլուխը դրել ա աղջկա ծնկանը, քնեւ:

Աղջիկը կասի. — Հը՛, ա՛յ տղա, օձն իրա պորտովը, զուշն իրա թևովը չի կարացե ըստերանք գա, դռւ ո՞նց ես սիրու արե էկեւ:

— Թու սե՛րն ա բերե, — կասի:

— Սերո՛ւմ կենաս, — կասի աղջիկը: — Բա՛ չե՞ս վախում, որ Օխտը գլխանի դևն վե կենա՝ քեզ թիքա-թիքա անի՛:

— Խի՛ պտի վախենամ, ես հենց դրա հավարին եմ էկեւ:

Տղեն կասի ու թուրը կքաշի, տալու բաշտան՝ օխտը գլուխն էլ մի հետ կթոցնի:

Դեր կասի. — Տղա՛, մըկ էլ տո՞ւ:

— Մորիցս մի հետ եմ էլե, — կասի, — մի հետից ավել չեմ տա: Դեր տեղն ու տեղը կսատկի:

— Ա՛յ տղա, — կասի աղջիկը, — դռւ որ էդրամ զուաղ ես էլերա՛ս զնա էս դկի աղպոր կուշտը. Հրե՛նիկ կողքի օթախումն ա: Միջնեկ քիրս էլ նրա ձեռին ա:

Տղեն վե կենա կիթա էն մի օթախը. Դուրը բաց կանի՝ կտենա մի հորի-մալաք աղջիկ. մենծ քորից դհա սիրուն, նստել աքարգա ա անում: Աղաքին Ոսկե սինի՝ միջին Ոսկե հավը, Ոսկե աթլուրը ֆըրֆըրահար են գալի: Տասնէրկու գլխանի դևն էլ՝ գլուխը դրել ա աղջկա ծնկանը, քնեւ:

Աղջիկը կասի. — Ա՛յ տղա, դո՞ւ ըստերանք: Օձն իրա պորտովը. զուշն իրա թևովը ընշանք հմի սիրու չի արե ըստերանք ոտ գնի, դռւ ո՞նց էս սիրու արե էկեւ:

— Թու սե՛րն ա բերե, — կասի:

— Սերում կենաս: Բա՛ էս Տասնէրկու գլխանի դկիցը չե՞ս վախենում, որ էս ա որդե որ ա վե կկենա՝ քու մենծ թիքեն անկացդ կթողաւ: Գնա՛, մեղք ես, քանի թեզ ա փախի՛. թե չէ որ վե կացավ՝ էլ նրա ձեռիցը շես պրծնի:

— Ես էլ հենց դրա հավարին եմ էկեւ. Խի՛ պտի վախենամ. մին նա՛ ա՝ մին ե՛ս:

Կասի թե չէ, տղեն<sup>1</sup> թուրը կքաշի, որ չի տա՛ տասնէրկու գլուխն էլ մի հետ էն դիհը կընկնի:

<sup>1</sup> Տպագիր տեքստում այս բառը շնչված է բանահավաքի ձեռքով: Բանահավաք-հրատարակիլ Տ. Նավասարդյանցը իր հրապարակած «Հայ ժողովրդական»

Դեր կասի.— Տղա՛, մըկ էլ տո՛ւ  
— Զէ՛, — կասի, — մի հետ կտամ. ևս մի հետ եմ էլե մորս փո-  
քիցը:

Էս դնն էլ ըստե ա սատկում, մնում:

Աղջիկն ասում ա. — Ա՛յ տղա, դու որ էղքամ զոռով ես էլե, բա՛ս  
գնա չս զեկ աղպոր կուշտը. հրե՛նիկ կողքի օթախումն ա: Իմ պու-  
ճուր թիրն էլ նրա՛ ձեռին ա:

Տղեն կէթա մենծ դեկ օթախը: Դուռը բաց կանի, կտենա մի սի-  
րում, նաշխում աղջիկ, որ օխտն օր, օխտը գշեր չուտես, շնմես՝  
հենց նրա գյուլ-ջամալին թամաշ անես. նստել ա, քարդա ա անում:  
Աղաքին էլ Ոսկե սինին դրած՝ միջին Ոսկե կաքավն ու մաղեն,  
ընենց իրար հեննա հաղ են անում, ֆըրֆըրահար գալի, որ գոնիցը  
մննողի խելք ու քյամալ են տանում: Քսանըշորս զիսանի գեն էլ  
զլուխը զրել ա աղջկա ծնկանը՝ քնե:

Աղջիկը կասի. — Ա՛յ հողածին, դո՛ւ ըստերանք: Օձն իրա պոր-  
տովը, զուշն իրա թեսովը ընշանք օրս չի կարացե ըստերանք ոտ զնի,  
դու ո՞նց ես սիրու արե, էկե:

— Քու սե՛րն ա բերե, — կասի:

— Սե՛րում կենաս Բա՛ չե՛ս տենում, որ Քսանըշորս զիսանի  
գեր քնել ա. որ վե կենա, էլ նրա ձեռիցը կպրծնե՞ս: Մե՛ղք ես,  
ջահել-ջիկան ես. քանի վախտով ա՝ փախի՛, զլուխդ պրծացրա՛:

— Խի՞ փախնեմ, ես հենց զրա հավարին եմ էկե, որ սըպա-  
նեմ: Մի ջան նա՞ ա, մի ջան՝ ե՞ս, էլ խի՞ պտի վախենամ:

Էս ասում ա թե չէ, զիդիշը՝ դ տղեն, թուրը հանում ա, որ չի՛  
շեպում դեկ քյալի մեջտեղիցը՝ քսանըշորս զլուխն էլ մի հանքի ա  
ֆը՛ռում, ընդե վեր ընկնում:

Դեն ասում ա. — Տղա՛, մըկ էլ տո՛ւ

— Զէ՛, — ասում ա, — էլ շեմ տա. մորիցս ես մի հետ եմ էլե,  
էրկու հետ շեմ էլե:

Էս դնն էլ ըստե ա շորանում, մնում:

Աղջիկը որ տենում ա տղի զոշաղությունը, վազում ա փաթըթ-

Հերիաթներիք զրթերի սնփական օրինակում, տպագիր տեքստերի վրա ուղ-  
ղումներ է կատարել: Տողատակի հետագա ժանոթությունների մեջ չտպազիր  
տեխնու արտահայտությունը վերաբերում է S. Նավասարդյանցի կողմից ստուգ-  
ված հիշյալ տեքստերին, որոնք հիմք են ծառայել ներկա հրատարակության հա-  
մար (Ս. 4.):

վում տղի ճտովը: Ասում ա. «Ես քունն եմ, դու՝ իմը»: Նո՞ր սրանք նստում են ըստե, իրար հեննա զրից անում:

Աղջիկն ասում ա.— Մենք իրեք քիր ենք՝ ֆլան թագավորի աղջըկեքը: Էս դեերն էկան մեզ փախցրին, բերին շինեցին իրանց կնիկ: Էս քանի տարի ա մենք մեռանք էդ շանավարների ձեռին: Աստոծ քու կռանն ըլնի, տղա՛. դու էլ որ շգայիր մեզ շաղատեիր, հոմենք պար ֆողեց-ֆոգի կորչեինք:

Տղեն կասի.— Էս լա՛վ էլավ. հազիր մընք էլ իրեք աղպեր ենք, իրեքս էլ ազապ. մենծ քվորդ մենծ աղպերս կառնի. միջնեկ քվորդ՝ միջնեկ աղպերս. դու էլ զաթի ի՛մն ես ու իմն ես:

Աղջիկը եննա հանում ա տղին մի թլիսիմը տալի:

— Ա՛ռ,— ասում ա,— ինչ վախտ պետքը գա՝ շախմախին տաս, էն մեր իրեք քվոր Ոսկե սինիքն էլ, իրանց ամեն սարք ու կարգովը կգան աղաքիդ կկաննեն:

Եննա վեր ա ունում, տանում գոմը:— Հրես տե՞նում ես էս իրեք ձին՝ մինը Սև ա, մինը՝ Սիպտակ, մինը՝ Կարմիր. սրանց ամեն մեկցը մի-մի մազ պոկա՛, պահա՛ մոտիդ. մարդ ա, բայի պետք ա գաւի: Ո՛ր մազը կրակին տաս՝ էն ձին էն սհաթը, իրա ամեն սարք ու կարգովը, կգա աղաքիդ կկաննի. եր ուղենաս էլի կթողաս՝ կէթա:— էլ եդ գոմի դուրը շինում ա, բալանիքը տալի տղին:

Նո՞ր ընդիան էրկոսվ վեր են կենում գալի էն մեկել քվորտանց կուշտը, նրանց էլ վեր են ունում, եննա զալի, դեերը ինչքամ խազինա ունեին՝ կրում են ֆորի բերանը:

Տղեն ձեն ա տալի:— Դե՛, աղպրտինք, պարանը կախ արե՛ք, իրեք դեին էլ սրպանել եմ. նրանց ունեցած-չունեցածն էլ քոմմառ հավաքե, բերի: Սավայի էս՝ իրեք հատ էլ սիրում, ձեր հավան կացած, աղջիկ եմ դուք. մարդիս՝ մինը:

Աղպրտինքը ուրախ-ուրախ պարանը կախ են տալի, խազինեն դուս քաշում: Վերջը մնում են աղջկերը:

Տղեն ամենքից աղաք մենծ քվորն ա պարանիցը կապում:— Էս քե՛զ, — ասում ա, — մե՛նծ աղպեր, քաշե՛ք:— Աղպրտինքը քաշում են:

Եննա միջնեկ քվորը:— Էս էլ քե՛զ, մի՛ջնեկ աղպեր:— Սրան էլ են քաշում:

Հմի մնում են պումուր քիրն ու տղեն: Աղջիկն ասում ա. «Աղաք դո՞ւ դուս արիս: Տղեն ասում ա. «Ձէ՛, դո՞ւ աղաք դուս արիս:»

Վերջը որ տղեն շատ ա զոռում, աղջիկն ասում ա.— Ինձ անկազ չե՞ս անում, համա տե՞ս, քու աղպրտինքը քեզ պտի մովսաննաթություն անեն: Մարդ ա, թե որ ըտենց մի բան ըլնի, չե՞ս վախենա: Կէթաս ուրբաթ օրը, ըստե մի աղբուր կա, էդ աղբրի վրեն կնստես: Մըկ էլ կտենաս իրեք ոշխար էկան՝ մինը Սև, մինը Սիպտակ, մինը Կարմիր, որ էդ աղբրիցը շուր խմեն: Դու քեզ կքցես աղաք Սևի վրեն, Սևը կքցի Կարմրի վրեն, Կարմիրն էլ Սիպտակի վրեն՝ Սիպտակն էլ քեզ լիս աշխար կհանի: Համա շըլնեմ-շիմանամ աղաք Սիպտակի վրեն ընկնես: Թե չէ Սիպտակը քեզ կքցի Կարմրի վրեն, Կարմիրն էլ Սևի վրեն՝ Սևն էլ քեզ Մութն աշխարք կհանի:

Աղպրտինքը պարանը կախ են տալի: Տղեն պումուր քվորը կապում ա պարանիցը:

— Էս էլ ի'նձ,— ասում ա,— աղպրտինք, քաշե՞ք:

Աղպրտինքը քաշում են, տենում, որ էս պումուր քիրը քոմմքին էլ գլխեց իրա սիրունությունովը: Իրար մեզ միտք են անում, թե՝ մեր պումուր աղպերը էսքան զոշաղություն արեց, էս թավուր էլ սիրուն աղջիկ ա տանում. բա՛ մենք ի՞նչ էրեսով էթանք մեր հոր կուշտը. բա՛ մեզ հմար ամոթ չի՞: Էկե՛ք պարանը կտրենք, նրան ֆորումը թողանք. էթանք մեր հորն ասենք, թե. «Իրեք դկին էլ մենք ենք սըպանե, էսքամ խազինեն էլ բերե: Մեր պումուր աղպորն էլ,— կասենք,— դկերը կերել են»:

Իրար մեզ խոսք են կապում, պարանը կախ տալի: Պումուր աղպերը պարանը կապում ա մեջքիցը:

— Աղպրտինք,— ձեն ա տալի,— դե հմի ի'նձ քաշեք:

Աղպրտինքը մի պումուր տեղ քաշում են, քաշում՝ մի դաֆիլ պարանը կտրում: Պումուր աղպերը գըրըմփալեն էլ եդ ընկնում ա ֆորը: Էրկու աղպերով իրանց զաղը-մաղը հավաքում են, գալի իրանց քաղաքը:

— Ա՛յ որդիք, բա ձեր պումուր ա՞ղպերն ուր ա,— հարցնում ա թագավորը:

— Բա չե՞ս ասի, ա՛յ հեր. նրան դկերը կերան: Էսքամ խազինեն, մալ ու դովլաթն էլ էն դկերինն ա. մենք էրկսով նրանց սըպանցինք, ունեցած-շունեցածներն էլ վե կալանք բերինք:

Խեղճ հերն էլ, բեխարար, աղպորտանց խոսքին հավատում ա:

Մրանց թողանք ըստե, գանք խարար տանք պումուր աղպորիցը: Պումուր աղպերը մնաց ֆորումը մենակ. դե՛ս ընկավ, դե՛ն ըն-

կավ՝ դուս գալու իլլաջ շգտավ՝ Վերջը պուճուր աղջկա ասածը միտն ընկավ, որ կենա ընչանք ովրաթ օրը, էթա աղբրի կշտին նստի, նրա ասած ոչխարների ճամփեն պահի. բալի նրանցով իրան քցի կիս աշխարք:

Ովրաթ օրը որ էկավ, տղեն վե կացավ գնաց աղբուրը Մի քիչ կացավ, տեհավ իրեք ոչխար էկան՝ մինը Սև, մինը Սիպտակ, մինը Կարմիր. էնքամ էլ սի՞րուն, էնքամ էլ նա՛շխուն, որ տենողի խելքն էր էթում: Ջուր խմեցին պրծան, ուզում ին էթա՝ տղեն իրան քցեց. ուզեցավ Սևի վրեն ընկնի, ՀՀկվեց Սիպտակի վրեն ընկավ: Սիպտակը քցեց Կարմրի վրեն, Կարմիրը՝ Սևի, Սևն էլ քցեց Մութն աշխարք:

Խեղճ տղեն էդ Մութն աշխարքումը գե՛ս ման էկավ, դե՛ն ման էկավ՝ տեղ շգտավ, որ սթար անի: Վերջը մի պառավի ռաստ էկավ:

— Ա՛յ մերա, — ասեց, — զոնաղ շե՛ս ուզի:

— Խի՞ շեմ ուզի, ա՛յ որդի, զոնաղն ա՛սունն ա:

Պառավը տղին կանչեց, տարավ տուն: Խեղճ տղեն, էս թամամ իրեք օր, ծարավ էր:

— Ա՛յ մերա, — ասեց, — մի քիչ ջուր տա՞ս խմեմ, էս իրեք օր ա ծարավ թուջ ու մուքս կպիլ ա:

Պառավը գնաց մի փարչ պղտոր ջուր բերեց, էնքամ պղտոր, որ կասես ցեխ ըլներ:

Տղեն հարցրեց. — Մե՛րա, ձեր ջուրը խի՞ ա ըսենց պղտոր:

— Ա՛յ որդի, — ասեց, — մեր ջուրը տարեն-տասնէրկու ամիս ըսենց պղտոր ա ըլնում, մենք ըսկի պարզ ջորի էրես տե՞նում ենք որ... Մեր աղբրի ակումը մի Օխտը գլխանի վիշապ ա էկի նստե, չի թողում որ ջուր գա: Շարաթը մի էրեխա ենք տանում տալիս Վիշապին, ոստում ա, նոր մի պուճուր ջուր ա թողում, որ ինչ ա՛ խալխը ծարավ չկոտորվեն: Էկուց էլ թագավորի աղջկա նորաթն ա, պտի տանեն Վիշապին տան ուտի, որ ջուր բաց թողա:

— Ա՛յ մերա, բա շե՞ք կարում էդ Վիշապին սըսպանի:

— Ա՛յ որդի, նրան ըսկի սըպանելու ճար կըլնի, սաղ երկիրը զվիր ա բերե: Թանի հետ թագավորը սաղ իրա դոշնովը գնացել ավեն կոիվ՝ բան շի կարացե անի:

Առավոտը որ լիսանում ա, տղեն տենում ա, որ հրեն թագավորի աղջկանը սև շորեր հագցրած տանում են Վիշապին տան: Ինքն էլ թաքուն աղջկա եննուցն էթում ա:

Վիշապը հեռվան տենում ա, որ լսօր մի ֆոքու տեղակ էրկուսն և դալի իրան կիրակուր ըլնեն, ուրախանում ա, ատամները սրում ա՝ հազրում, որ գալու բաշտան էրկսին էլ մի զրբի կուլ տակ Համա տղեն Վիշապին մոտանում ա թե չէ, թուրը հանում ա՝ ո՛ր չ տալի՛, օխտը զլուխն էլ մի հանքի ա թոնում, էն դի՛ն ընկնում:

— Տղա՛, մըկ էլ տո՛ւ, — ձեն ա տալի Վիշապը:

— Չէ՛, — ասում ա տղեն, — ես մորիցս մի հետ եմ էլե, էրկու հետ չեմ էլե:

Վիշապը արենկուր աղբրի ակումը վեր ա ընկնում, սատկում: Էն սհաթը աղբրի ջուրը վարարում ա, խալսը լիանում են, բոլ-բոլ խմում՝ ասսուն փառք տալի: Թագավորի աղջիկն էլ ուրախ-ուրախ գալիս ա տուն, հորն ու մորը նայլ անում, որ մի անճանանչ տղա էկավ Վիշապին սըպանեց, իրան էլ նրա ձեռիցը ազատեց:

— Բա՛ էն տղին որ տենամ՝ չե՞ս ճանանչի, — հարցնում ա թագավորը:

— Որ տենամ, իի՞ չեմ ճանանչի, — ասում ա աղջիկը:

Թագավորը սաղ իրա երկրումը ջառ ա գոռալ տալի, որ իրա ձեռի տակը ինչքամ մարդ կա՝ քոմմա հավաքվեն իրա պալատի աղաքը: Նրա երկրումն է՛լ մարդ չի մնում՝ քոմմա էլ գալիս են կիտվում նրա պալատի աղաքին:

— Դե լա՛վ թամաշ արա, — ասում ա թագավորը իրա աղջկանը, — տես էն տղին կճանա՞նչես:

Աղջիկը աշքը դե՛ս, դե՛ն ա ման ածում, ալբիալը էն տղին գըտնում ա:

— Հրե՛ն, հրե՛ն, էն տղեն էր, — ձեն ա տալի հորը:

Թագավորը հրամայում ա իրա նաղիր-վեզիրին, որ էն տղին բերեն իրա կուշտը: Նաղիր-վեզիրը էթում են, տղին բերում:

— Տղա՛, ուղա՛ տամ, — ասում ա թագավորը:

— Թագավորն ապրած կինա, ես զադ չեմ ուղում, թաքիլան ինձ մի կիս աշխար քցես, — ասում ա տղեն:

— Կիս աշխար զրկիլը դժար ա, ա՛յ որդի. էդ իմ բանը չի: Համա ֆլան մեշումը, ֆլան ծառի վրեն մի Զմուռտ զուշ կա. թե կարենա, նա կտանի, էլ մարդ՝ չէ՛ էս քանի տարի ա, էդ զուշը գալիս ա ինձ զանգատ, թե. «Ես ամեն տարի խեղճ ու կրակ ճուտ եմ հանում, մեծացնում, մի Վիշապ կա, գալիս ա, ճուտերս ուտում, էթում»: Դու կէթաս էն ծառի տակին զարավուկ կքաշես, կտենաս

որ էն Վիշապն էլի էկավ, շուշալվեց ծառը, որ ճուտերն ուտի՝ կտաս Վիշապին կորպանես: Զմռուտ ղուզը որ գա, տեսնա քու արած լավությունը՝ կհարցնի, թե. «Ի՞նչ ես ուզում»: Դու կասես, թե. «Ես զադ չեմ ուզում, մենակ ինձ կիս աշխար տա՛ր»: Նա էն սհաթը կդնի քեզ թևերի վրեն՝ կտանի:

Թագավորի ասածը տղի բեյինը մննում ա. վեր ա կենում էրում էն մեշեն: Դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի՝ էն ծառը գտնում ա: Նստում ա էդ ծառի տակին, Վիշապի ճամփեն պահում:

Մի քիչ կենում ա, տեսնում ա՝ մի եքա Վիշապ հրեն էկավ, շուշալվեց ծառը, որ Զմռուտ ղջի ճուտերն ուտի. էն սհաթին հանում ա թուրը, տալի սրպանում, դիմա-դիմա անում, տանում քցում ճուտերի աղաքը, որ ուտեն: Ինքն էլ շունքի բեզարել էր՝ պակում ա էդ ծառի տակին, քնում:

Էն դհից, Զմռուտ ղուզը գալիս ա, տեսնում՝ մի մարդ հրեն ծառի տակին քնած:

«Ա՛յ հարա՛յ, — ասում ա, — կա-շկա՝ սա ա իմ ճուտերի յուխում տվողը»:

Վրա ա պրծնում, որ ձվիկ-ձվիկ անի՝ ճուտերը շեն թողնում. ասում են, որ սա ա իրանց պրծնացրե Վիշապի ձեռիցը: Նո՛ր Զըմռուտ ղուզը էլ ձեռ շի տալի, դեռ հլա թևերը փռում ա վրեն՝ շվաք անում, որ դինջ քնի:

Մի քիչ կենում ա, տղեն զարթնում ա, տեսնում՝ Զմռուտ ղուզը թևերը վրեն շվաք ա արե:

— Ա՛յ հողածին, — ասում ա Զմռուտ ղուզը, — ուզա՝ տա՛մ: Դու որ ինձ էս թավուր լավություն արիր՝ ես էլ պտի քեզ մի լավություն անեմ:

— Զադ չեմ ուզում քեզանից, — ասում ա տղեն, — Զմռո՛ւտ ղուզ, թափիլան ինձ մի քցես կիս աշխարք:

— Ափսո՛ս, ծեր վախտս ես ուստ էկե. թե չէ լիս աշխարք տանիլը ինձ հմար հաղ ու պար ա: Համա ինչ արած. ինչքամ էլ ծերացած ըլնեմ, ճա՞րն ինչ, պտի տանեմ. բալի սրանով էլ ա քու լավությունի տակիցը դուս գամ: Կէթաս թագավորիցը կուզես քառասուն տիկ<sup>1</sup> ջուր, քառասուն հատ էլ գառան դմակ. ո՛նց ըլնի՝ ես քեզ կիս աշխարք կքցեմ:

<sup>1</sup> Տպագիր տեքստում՝ բուլուս, ուղղումը բանահավաքինն է (Ս. 4.):

Տղեն կէթա թագավորիցը քառասուն տիկ ջուր կուզի, քառասուն հատ էլ գառան դմակ, կրերի Զմռուտ զշի կուշտը:

— Դե՛, հմի նստի մեջքիս վրեն, — կասի Զմռուտ զուշը, — էդ քառասուն տիկ ջուրը, քառասուն հատ գառան դմակն էլ դի վրես: Որ սրո՛ւ կանեմ՝ զուրը կքցես, «դի՛» կանեմ՝ դմակը կքցես. կքցես՝ ընշանք հասնենք կիս աշխարք:

Տղեն նստում ա Զմռուտ զշի մեջքին. քառասուն տիկ ջուրը, քառասուն հատ դմակն էլ զնում ա վրեն: «Բո՛ւ ա անում՝ ջուրն ա քցում, ողի՛ ա անում՝ դմակը: Ըսենց գալիս են, գալի՛ հասնում կիս աշխարք: Զմռուտ զուշը ըստե տղին վեր ա զնում, ինքն էլ եղ թռնում, գալի Մութն աշխարքը:

Էս տղեն ա, մի ճամփա ա բռնում՝ դպա իրա հոր քաղաքը՝ Գալիս ա, զալիս, շատն ու քիչն աստոծ գիտա, ճամփին մի լորանի ա ռաստ գալի:

— Բա՛րով, — ասում ա, — չո՛րան աղպեր:

— Ա՛սու բարին, թագավորի ցեղ:

— Ի՞նչ տամ, որ քու ոշխարներիցը մի հատ մորթես:

— Ի՞նչ որ քեֆդ ա, թագավորի ցեղ, ես ի՞նչ ասեմ:

Զորանը բերում ա իրա ոշխարներիցը մի հատ վե քցում՝ մորթում: Տղեն մենակ ոշխարի զառինն ա վեր ունում, միսը թողում ա շորանին:

— Չո՛րան աղպեր, — ասում ա, — բե մեր շորերն էլ փոխենք. քու շորերն ինձ տու, իմը տամ քեզ:

Զորանը ուրախ-ուրախ իրա քրչոտ-մրշոտ շորերը հանում ա տալի նրան, նրա լավ-լավ շորերն առնում: Տղեն շորանի շորերը հագնում ա, շորանին էլ բոլ փող բաշխում, էլ եղ էթում իրա ճամփեն:

Գալիս ա, զալիս, շատն ու քիչն աստոծ գիտա, որ հասվե-հաս ա ընում հոր քաղաքին, էն ուխարի զառինը հանում ա, ճխտուա գլուխը՝ ըլնում ա լա՛փ զըռ-քաշալ. ըսենց մննում ա հոր քաղաքը: Թաղարի մեջ դե՛ս ա ման զալի, դե՛ն ա ման զալի. էթում ա է՛ս դուքանի աղաքին կաննում, է՛ն դուքանի աղաքին կաննում թամաշ անում:

Վերջը զալիս ա թագավորի զարգյարի դուքանի աղաքին որ երկար կաննում ա, մտիկ անում, զարգյարը հարցնում ա. — Ա՛յ քաշալ, ի՞նչ ես ուզում, ի՞նչ մարդ ես, ըստերանք ի՞նչ ես շինում:

- Հսկի՛, ո՛ւստա, զարիր տղա եմ, էկել եմ ըստե մի փեշակի, մի բանի կպնեմ, բալի վերջը մի կտոր հացի տեր դառնամ:
- Կգա՞ս, քեզ վեր ունեմ ինձ աշկերտ:
- Իի՞ չեմ գա, ո՛ւստա ջան, դեռ ձեռդ էլ չեմ պաշմ:
- Թագավորի զարգյարը էս քաշալին վեր ա ունում իրան աշ-կերտ:

Գանք հմի խարար տա՛նք սրա աղպորտանցիցը:

Նրանք որ էկան թագավորին ասեցին, թե իրանց պուճուր աղ-պորը դերը կերել են, թագավորը աղաք ավատաց. համա եննա ինքն իրան միտք արեց, թե լընի՞ սրանք նրա գլուխը մի օդիա են էկե, սուս ասում են՝ դերը կերել են. Սրա հմար էլ մարդ որկեց, որ աշխարե աշխար, երկրը երկիր ման գան, հարցու ու փորձ աննն բալի գտնվում ա. նրանց էլ լթողաց, որ պսակվեն, ընշանք պուճուր աղպոր գտնիլը:

Համա անցկացավ մի տարի, էրկու տարի, իրեք տարի, ո՛րդե հարցրին, ո՛րդե ման էկան պուճուր տղին չգտան ու չգտան:

Վերջը թագավորի նազիր-վեզիրը էկան թագավորի կուշտը, ասացին.— Թագավորն ապրած կենա, ախա՛ր ընշանք ե՞ր պտի տղեքանցդ չպսակես, չէ՞ որ նրանք էլ մեղք են: Էս իրեք տարին անց ա կենում, խալիս ի՞նչ կասեն, չէ՞ որ քու անըմին էլ ա ամոթ:

— Լա՛վ,— ասում ա թագավորը,— էկեք պսակենք:

Բերում ա պսակում. մենծ տղեն մենծ քվորն ա առնում, միշ-նեկ տղեն միջնեկ քվորը. պուճուր քիրը մնում ա:

Հարսանքից եղը, թագավորը պուճուր քվորը կանչում ա իրա կուշտը, հարցնում.— Ա՛յ որդի, — ասում ա, — ասա՛ տենանք, դո՞ւ ումն ես ուզում առնի: Տենում ես նշանածդ քու բախտիցը էսքամ տարի կորել ա. ով գիտա հմի ինչ փորձանքի ա ռասու էկե. էլ նոր աստոծ գիտա՝ գա՞ , շգա՞ , Դու էլ մեղք ես, էս իրեք տարի ա նրա խաթեր ազապ ես կացե: Հմի ասա՛, ո՞ւմ սիրտդ ուզում ա, բերեմ պսակեմ:

— Թագավորն ապրած կենա,— ասում ա աղջիկը,— ում տա-լիս ես՝ տո՛ւ. ես զա՛րու եմ:

— Իմ նազրի տղին կո՞ւզես:

— Դու գիտաս, թագավորն ապրած կենա. հենց ո՞վ ըլնի՞ ես ռազի եմ:

— Որ ուղի ես, բա՛ս ես քեզ իմ նաղրի տղին եմ տալի:  
— Լա՛վ, թող նաղրի տղին ըլնի, թագավորն ապրած կենա.  
Համա ես քեզանից իրեք բան կուղեմ. ընշանք չբերիլ տաս՝ չեմ  
պսակվի:

— Ա՛շիս վրա, ո՛րդի, ասա՛. ասա՛ տենանք՝ ի՞նչ ես ուզում.

— Թագավորն ապրած կենա, քեզանից կուղեմ իրեք հատ  
ընենց Ոսկե սինիք, որ մի սինու միջին Ոսկե կաթավը, Ոսկե մադեն  
ֆըրֆըրահար գան. մեկի միջին Ոսկե հավը ու Ոսկե աքլորը կան-  
նած ըլնեն. էն մեկելի միջին էլ՝ Ոսկե թաղի, Ոսկե աղվես. որ թա-  
ղին աղվեսի եննուցը վազելիս ըլնի: Թագավորն ապրած կենա,  
հրե՛ս իմ ուղած իրեք բանք սրանք են:

— Լա՛վ, ա՛յ որդի. դրանից հեշտ բա՞ն: Հըե՛ս իմ զարգյարին  
կանչիլ կտամ, թամրահ կանեմ՝ շինի:

Թագավորը էն սհաթը կանչիլ ա տալի իրա զարգյարին, թամ-  
րահ անում, որ աղձկա ուղած իրեք սինիքը շինի:

— Թե շշինեցիր,— ասում ա, — իմաց կաց գլուխդ թոցնիլ  
կտամ:

— Թագավորն ապրած կենա,— ասում ա զարգյարը.— ինձ մի  
ամիս մհուկ տո՛ւ, միտք անեմ, չկարացի շինի՝ արինս քեզ հա-  
լաւ ա:

— Լա՛վ, քեզ մի ամիս վաղա եմ տալի. գնա՛ շինա, — ասում  
ա թագավորը:

Զարգյարը քիթ ու պոռնզը վե թողած՝ դառը, տխուր գալիս  
ա տուն:

— Հը՛, ո՛ւստա, ի՞նչ կա. խի՞ ես ըտենց նոթերդ կիտե, —  
հարցնում ա քաշալը:

— Կո՛րի, քա՛շալ, — բարկանում ա ուստեն, — դո՛ւ էլ իմ դար-  
պիցը խարար շեմ<sup>1</sup>:

Քաշալը ինչ անում ա, չի անում, ուստեն չի ասում իրա դար-  
պը: Վեր ա կենում էթում դուքան: Միտք ա անում, միտք անում,  
շինում՝ քանդում, շինում՝ քանդում, բան չի դուս գալի: Ամիսն էլ  
մնացել էր մի հինգ օր, որ թամմի՝ դեռ նա ըսկի զադ շէր շինե:

Մի օր էլ, որ ըսենց իրա մտքի հեննա էր ընկե՝ քաշալը էլի  
մոտանում ա, հարցնում: — Ո՛ւստա զան, ո՛ւստա, մի ասա տե-

<sup>1</sup> Տպաղիր տեքստում՝ «վազք չես զալի», ուղղումը բանահավաքինք է (Ս. Կ.):

նանք. ախար խի՛ ես էղքամ միտք անում, հալբաթ մի բան կա: Վերջը որ քաշալը շատ ա զոռում, ուստեն մին-մին նաղլ ա անում թագավորի ուղածը:

— Հա՛վ, դրանում ի՛նչ կա, ո՞ւստա, որ դու էսքամ միտք ես անում,— ասում ա քաշալը,— ուղում ես՝ էս սհաթը շինեմ: Ինձ մի շվալ պոպոք տու, մի շվալ էլ պնդուկ, էլ զադ չէ, որ հետք շարդեմ ուտեմ, հետը շինեմ. էս քշեր էլ թո՛ղ դուքանումը քնեմ. առավոտը արի տես հա՛զիր ա, թե չէ՛:

Ուստեն, ասենք չէր ավատում, որ քաշալի ձեռիցը էս թագուր հումար դուս գա. համա ասեց. «Մարդ ա, մի փորձեմ տենամ. բա-լի շինում ա՞յս: Մի շվալ պոպոք ա տալի, մի շվալ էլ պնդուկ: Թա-շալը առնում ա մննում դուքանը. ուստեն դուքանի դուռը վրեն շինում ա, էթում:

Էղ սաղ գշեր քաշալը պնդուկն ու պոպոքը շարդում ա ուտում, շարդում ա ուտում ընշանք իմս! Որ լիսանում ա, քաշալը հանում ա էն թլիսմը, շախմախին տալի թե չէ՛ էն սհաթը իրեք սինիքն էլ, իրանց սարք ու կարգովը գալիս են աղաքին կաննում:

Խեղճ ուստեն վաղուց էր դուքանի դուռը դուկ էլե, կաննե՛ տե-նա քաշալը ե՞ր պտի ձեն տա, որ դուռը բաց արա, թագա-վորի ուղած սինիքը՝ իրեքն էլ հազիր ա:

Ուստեն ուրախ-ուրախ դուքանի դուռը բաց ա անում: Որ աշթը չի ընկնում ոսկե սինիքանցը՝ խելքը զվասիցը թռնում ա. էն սհաթը վաղում ա քաշալի ճակատը պաշում:

— Զորա՛նաս դու, — ասում ա, — քա՛շալ, զորանաս. ո՞ր էս թագուր հումար ունեիր, բա խի՛ շիր թեզ ասում: Ես էսքամ վախտ մեռա շարշարվելոն՝ ըսկի խելքս բան շկտրեց. ասում ի՛ պտի թա-գավորը ինձ քյալլա անի. հմի ո՞վ գիտա դեռ բոլ էլ փող բաշխի ու ընենց ճամփու դնի:

Զաթի վադեն էլ թամմել էր. ուստեն ոսկե սինիքը վե կալավ, տարավ դուզ թագավորի պալատը: Թագավորը որ շտեհավ՝ մնաց, մաթ էլած վրեն մտիկ անելոն: Հրամայեց, որ իրա խազինիցը ուս-տին բոլ փող բաշխեն, ընենց ճամփու դնեն:

Եննա կանչեց աղջկանը.— Ա՛յ որդի, — ասեց, — է՛ս ա քու ու-գած սինիքը:

— Էղ ա, թագավորն ապրած կենա, հմի ի՛նչ կասեմ:

Աղջիկը սինիքը որ տեհավ՝ մատը կծեց. «Բալի՛,—ասեց,—էրեգում ա նշանածս էկել ա, թե չէ էս սինիքը նրանից սավայի մարդ չէր կարա շինի»: Աղջկա սիրտը անջախ որ մի քիչ հանդարտեց:

Սրանից եղը թագավորը բերեց աղջկանը նշան դրեց, որ էր կու օրեն եղը հարսանիք անի: Նշանդրեքից եղը, նորափեսեն իրաթայդաշ տղերանցով դուս էկավ թագավորի պալատի աղաքը՝ շղիր հաղալու:

Սրանց թողանք ըստե ջղիր հաղան, գանք խաբար տանք մեր քաշալից:

Էդ նշանդրեքի օրը քաշալը ուստից իզին ուզեց, ասեց. «Է՛թամ հանդր մի շալակ ցախ բերեմ»: Որ դուս էկավ հանդր, կարմիր մազը կրակ տվեց թե չէ՝ Կարմիր ձին, իրա ամեն սարք ու կարգովը էկավ աղաքին կաննեց: Թաշալը զառինը գլխիցը հանեց, շորերը փոխեց. նի էլավ ձին, էկավ ջղիր հաղալու:

Թաշալի ձիուն էլ ձի՛ կարար հասնի. ընենց էր թոնում, ծովծուլ ըլնում, հենց գիտենաս երկնքի աստղերի հեննա էր հաղում: Մի քանի գլուխ որ մեյդանի միջին դե՛ս քշեց, դե՛ն քշեց՝ ջղրագորները քոմմա էլ մեյդանը թողին, փախան: Չունքի հենց ում հասնում էր ո՛ր ջղրով չէր տալի՝ տեղն ու տեղը էրեսհարքի վրեն փոկվում էր, վեր ընկնում:

Խարարը տարան թագավորին, թե ըսենց մի Կարմիր ձիավոր ա էկե, ջղրագորների մեջը խառնըվե. հենց ո՛ւմ ետևիցը որ ընկնում ա, ջղրով տալի՝ ալրիալը ձիուցը կոմատկի ա անում՝ յա՛լագետինը: Թագավորը դուս ա զալի. ասում ա՝ տենամ էդ ի՛նլ ձիավոր ա. որ էդքամ զոշաղություններ ա անում:

Թաշալը թագավորին տենում ա թե չէ՝ էն սհաթը ձիուցը վեր ա գալի: Էթում ձեռը պաշում:

— Ի՞նչ մարդ ես, — հարցնում ա թագավորը:

Նո՛ր տղեն նստում ա ըստե մին-մին, ինչ որ գլխովը անց էր կացե, թագավորին նաղլ ա անում:

— Զա՞նլաթ, — ձեն ա տալի թագավորը: Զանլաթները գալս են:

— Ի՞նչ ես հրամայում; թագավորն ապրած կենա:

— Էս սհաթին կէթաք իմ էրկու տղին էլ կրերեք ըստե, հենց իմ աշքի աղաքին քյալլա կանեք:

Նոր ըստե պումուր տղեն ընկնում ա թագավորի ոնները, աղա-

շանք-պաղատանք անում.— Բա՛ն չկա, ա՛յ հեր,— ասում ա,— իմ  
իսաթեր պտի աղպորտանցս բաշխես: Նրանք ինձ մովսաննաթու-  
թյուն արին, ևս չեմ-անի: Աստոծ նրանց թո՛ղ բարի տա:

— Լա՛վ,— ասում ա թագավորը,— շունքի դռւ ասում ես՝ քու  
իսաթեր հմար նրանց բաշխում եմ:

Թագավորը իրա թախտիցը վեր ա գալի, պուճուր տղին նրս-  
տացնում: Էն խեղճ աղջիկը զաթի էսքամ տարի սրա ճամփեն էր  
պահում: Թագավորը իրա վեզրի տղի նշանը քանդում ա, բերում  
է՛ն սհաթը թագաղան նշան դնում տղի վրեն՝ օխտն օր, օխտը գշեր  
հարսանիք անում: Ի՞նչ դափ ու զուտնա, ի՞նչ քեֆ, ի՞նչ ուրախու-  
թյուն, որ էլ հալ ու հեսար շկար:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մու-  
րազին:

